Հավելված 2
2023թ. «02» «07»-ին
Կնքված N ԴՊՏ-1141-11018/24 ԼԿԼ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՊՏ-1141-11018/24 ԼԿԼ

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում |
| **Դրամաշնորհի N** | N ԴՊՏ-1141-11018/24 ԼԿԼ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.01.2024 – 31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2024 – 31.12.2024 |
| **Ներկայացման օր** | 20.12.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Տաթևիկ Ղազարյան<br>Ծրագրի համակարգող |

## Բովանդակային հաշվետվություն

**1.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**

**Միջոցառում 1**. Շահառուների ընդունելության կազմակերպում, բազմամասնագիտական թիմի կողմից սոցիալական կարիքների առաջնային գնահատում:
**Միջոցառում 2.** Գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք անհատական սոցիալական ծրագրի կազմում:
**Միջոցառում 3.** ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 4.** Շահառուների սոցիալ-հոգեբանական /այդ թվում ՝ վարքային և խոսքային խնդիրների հաղթահարում/ և կյանքի հիմնական հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 5.** Արտակենտրոն ծառայությունների տրամադրում ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների:
**Միջոցառում 6.** Երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացների կազմակերպում:

**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
**Միջոցառում 8.** Ցերեկային խնամքի կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում վարքային, առողջական խնդիրներ ունեցող երեխայի անձնական ուղեկցողի տրամադրում:
**Միջոցառում 11.** Հանրային միջոցառումների կազմակերպում և ծրագրի տեսանելիության ապահովում:
**Միջոցառում 12.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից սոցիալական կարիքների գնահատում՝ որի արդյունքում իրականացվել է թվով **28** շահառուի ընդունելություն: Գնահատված շահառուների կարիքները փաստաթղթավորված են: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:
**Միջոցառում 2.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/-ի թվով **143** շահառու ներգրավվել են հետևյալ անհատական և խմբային աշխատանքներում՝

- Տղաների համար նախատեսված ֆիզիկական ակտիվության խմբակ/ - 16 երեխա
- Աղետների և ռիսկերի նվազեցմանն ուղղված խմբակ – 22 երեխա
- Արդյունավետ հաղորդակցություն- 30 երեխա
- Խեցեգործություն – 44 երեխա
- Արտթերապիա - 42 երեխա
- Նկարչաթերպիա - 52 երեխա
- Խոհարարություն – 49 երեխա
- Լոգոպեդ – 18 երեխա /անհատական ծառայություն/
- Հոգեբան – 14 երեխա /անհատական ծառայություն/
- Հատուկ մանկավարժ -17 երեխա/անհատական ծառայություն,
  7 երեխա/խմբային պարապմունք
- Սոցիալական աշխատանք – 4 /անհատական ծառայություն/

Արցախից բռնի տեղահանված երեխաների թիվ՝ 21, որից՝ 15 աղջիկ, 6 տղա, վերջիններիս ներգրավվածությունը տարբեր խմբակներում ներկայացված են ստորև

- Խեցեգործություն -10 երեխա
- Նկարչաթերապիա - 12 երեխա
- Ֆիզ. Ակտիվություն - 6 երեխա
- Խոհարարություն - 6 երեխա
- Արդյունավետ հաղորդակցություն- 6 երեխա

**Միջոցառում 3.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **143** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4.** Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է

**Միջոցառում 5.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 5/ հաշվետու ժամանակահատվածում թվով **42** շահառու ծառայություն է ստացել նաև արտակենտրոն: Գործողությունը 5-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

**Միջոցառում 6.** Հաշվետու ժամանկահատվածում կենտրոն հաճախող շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ դասընթացները և սեմինարները

- 17.11.2024 թեմա՝ «Խրախուսանքի դերը երեխայի կյանքում», վարող, հատուկ մանկավարժ՝ Աննա Չոբանյան: Մասնակիցների թիվ՝ 15:
- 17.11.2024 թեմա՝ «Միջանձնային հարաբերությունների կարգավորումը արտթերապիայի միջոցով», վարող, հոգեբան՝ Տանյա Աղաբեկյան: Մասնակիցների թիվ՝ 16:
- 21.11.2024 թեմա՝ «Պայքար երեխայի հանդեպ բռնության դեմ», վարող՝ ՀՀ Ստեփանավանի քննչական բաժնի անչափահասի, անգործունակի, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողություններին ներգրավվող որակավորված հոգեբան՝ Արփինե Հայրապետովան: Մասնակիցների թիվ՝ 15:
- 25.12.2024 թեմա՝ «իրավունքը բոլորինն է», վարող՝ ՀՀ Ստեփանավանի քննչական բաժնի անչափահասի, անգործունակի, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողություններին ներգրավվող որակավորված հոգեբան՝ Արփինե Հայրապետովան: Մասնակիցների թիվ՝ 21:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 15 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող հարցերի վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն:

**Միջոցառում 8**. Հաշվետու ժամանակահատվածում անձնական ուղեկցողի ծառայություն է տրամադրվել թվով 1 շահառուի, շաբաթական երեք օր 4 ժամ տևողությամբ:

**Միջոցառում 11.**

- 05.11.2024թ-ին կենտրոնի թվով 15 շահառուներ այցելել են Ստեփան Շահումյանի անվան տուն-թանգարան, և ներկա գտնվել հայ ժողովրդական նկարիչ՝ Անտուան Ավետյանի ցուցահանդեսին: Մասնակիցների թիվ՝ 36:
- 03.12.12 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կենտրոնում կազմակերպվել է կենտրոնի շահառուների ձեռքի աշխատանքների բաց ցուցադրություն, այն ուղեկցվել է հյուրասիրությամբ և շնորհակալագրերով: Կենտրոնի շահառուների և իրենց ընտանիքի անդամների համար կազմակերպվել է նաև կավագործության վարպետաց դաս: Մասնակիցների թիվ՝ 30:

**Միջոցառում 12.** Իրականացվել է գնահատում (ծրագրի 12-րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների 95 % մոտ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

10.12.2024թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի համակարգող Անի Զաքարյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի հերթական նիստին:

Ստորև ներկայացվում են Լոռու մարզի Ստեփանավան կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումները
https://www.facebook.com/groups/738413854220041

Ծրագրերի համակարգող Տ. Ղազարյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս.Մաղաքյան